ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 17 » դեկտեմբերի 2024թ. N 79 - Լ

Ե Ր Ե Վ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐ ՔՆՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 224.1-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 28-ի N 860-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կանոնադրության 21-րդ կետի 15-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն՝

1) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենի աշխատակազմի բաժնի պետը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 186-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների համար,

2) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի սահմանային վերահսկողության ստորաբաժանման պետը, ստորաբաժանման խմբի պետը, ավագ սպան, սպան՝ Օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումների համար,

3) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության հակահետախուզության գլխավոր վարչության բաժանմունքի պետը, հատուկ կարևորագույն գործերով ավագ օպերլիազորը, ավագ օպերլիազորը, օպերլիազորը՝ Օրենսգրքի 206.18-206.20-րդ հոդվածներով (բացառությամբ 206.20-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավախախտումների) նախատեսված վարչական իրավախախտումների համար,

4) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կառավարական կապի և տեղեկատվական անվտանգության գլխավոր վարչության բաժնի պետի տեղակալը, ավագ տեսուչը, տեսուչը, կրտսեր տեսուչը՝ Օրենսգրքի 206.20-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտումների համար,

5) «Պետական գաղտնիքի մասին» օրենքի համաձայն՝ գաղտնիության ռեժիմի ապահովման ստուգումների անցկացման նպատակով հաստատված կարգադրագրերում ընդգրկված Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության աշխատակիցները՝ Օրենսգրքի 206.18-206.20-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների համար։

2. Սույն հրամանն ուժի է մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից։

ՀՀ ազգային անվտանգության
ծառայության տնօրեն **Ա. ԱԲԱԶՅԱՆ**